



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵԼՔԵՐՆ ՈՒ ՄՈՒՏՔԵՐՆ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼՈՒ ԿՈՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի և Գայանե Դեմիրջյանի,

քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ հանրապետության բոլոր դատարանների ելքերն ու մուտքերն արգելափակելու կոչի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու հարցը,

## Պ Ա Ր Ձ Ե Ց՝

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը 19.05.2019 թ. ֆեյսբուքյան իր էջում կոչ է արել հասարակության անդամներին՝ հանրապետության բոլոր դատարանների ելքերն ու մուտքերն արգելափակել: Այս կոչը լայնորեն տարածվել է էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցներով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն այդ առիթով իր անհանգստությունն է հայտնում հաշվի առնելով այն, որ կոչի իրագործման դեպքում կխախտվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի և օրենքների պահանջները:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:*

«Սահմանադրության 162-րդ հոդվածը սահմանում է, որ

19 մայիսի 2019թ.

թիվ 9-Լ

ք. Երևան

արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները և արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

ՄԱԿ-ի 06.09.1985թ. «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ»-ի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝

- դատական մարմինների անկախությունը երաշխավորվում է պետության կողմից և հաստատվում է Սահմանադրությունում կամ երկրի օրենքներում: Բոլոր պետական և այլ հիմնարկները պարտավոր են հարգել և պահպանել դատական մարմինների անկախությունը:

- յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է համապատասխան պայմաններ ստեղծել՝ դատական մարմիններին հնարավորություն տալով իրենց պարտականությունները կատարել պարզաճ կերպով:

ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վրանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:

Ժամանակակից իրավական պետության (որպիսին հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը) մեխանիզմը գործում է պետական իշխանության 3 ինքնուրույն թևերի՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքներով: Իշխանությունների կառուցակարգային բաժանումը պահանջում է, որ օրենսդիրը և գործադիրը իրավունք չունենան միջամտել կամ ներխուժել արդարադատության իրականացման ոլորտ:

Վարչապետը ներկայացնում է պետության թևերից մեկը՝ գործադիր իշխանությունը: Հետևաբար, վարչապետի կոչի հիման վրա դատարանների գործունեության փաստացի խոչընդոտումը կամ դատական իշխանության գործելու փաստացի սահմանափակումները վտանգում են դատական իշխանության անկախությունը:

Այս մոտեցումը ՀՀ փաստաբանների պալատին անհանգստացնում է նաև այն տեսակետից, որ դատարանների ելքերն ու մուտքերն արգելափակող և նմանատիպ գործողությունները կարող են համընդհանուր կաշկանդող ազդեցություն ունենալ դատական համակարգի անկախության նկատմամբ: Որպես հետևանք, դատավորները հակված են լինելու հրաժարվել գործադիր իշխանությանն անհաճո օրինական դատական ակտեր կայացնելուց՝ անցումային արդարադատության կամ նմանատիպ գործողությունների վտանգ կանխազգալով, ինչն ուղղակիորեն կխոցի պետության իրավական անվտանգությունը:

**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը պատրաստ է աջակցել վարչապետի կամ իրավասու այլ պաշտոնատար անձի ցանկացած այն նախաձեռնությանը, որն ուղղված կլինի դատական համակարգից կոռուպցիան վերացնելուն, նոր կամ նախկին պաշտոնատար անձանց ապօրինի ազդեցությունը վերացնելուն, համակարգը որակյալ կադրերով համալրելուն և արդարադատության որակը բարելավելու այլ գործողություններին:**

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Փաստաբանության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի պահանջներով,  
ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը, միաձայն

**Ո Ր Ո Շ Ե Ց '**

- Կոչով դիմել Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությանը՝  
ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել  
դատական իշխանության անկախությունը կամ դիտարկվել որպես  
միջամտություն արդարադատության իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**19 մայիսի 2019թ.  
թիվ 9-Լ  
ք. Երևան**